# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,hեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
## 22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 176

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի պահանջը, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի $14^3$ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով ինչպես նաև Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 30-Ա որոշման պահանջը, **որոշում եմ**

Փոփոխել քաղաքացի Սուսաննա Կոբեյանին սեփականություն հանդիսացող 07-062-0203-0048 կադաստրային ծածկագրով 0.012 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020թ.սեպտեմբերի 22
գ.Վերին Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 177**

### ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈԲԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով , որոշում եմ.

1. Քաղաքացի Սուսաննա Կոբեյանին սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր 07-062-0203-0048/ 0.012 հա հողատարածքին տրամադրել հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի Նորավան թաղամաս 1-ին փողոց թիվ 36:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 23
գ.Վերին Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670, էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
**24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 178**

## ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ**

2020 թվականի սեպտեմբերի 28-ին ժամը 17:00-ին հրավիրել Վերին Պտղնի համայնքի ավագանու արտահերթ նիստ՝հետևյալ օրակարգով

1. Վերին Պտղնի համայնքի վարչական տարածքի սանիտարական մաքրման սխեման 2020 թվականի համար հաստատելու մասին:
2. Վերին Պտղնի համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների քննարկման մասին:
3. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 22-ի թիվ 9-Ա որոշու մը ուժը կորցրած ճանաչելու մասին:
4. Քաղաքացի Սարգիս Մկրտչյանի դիմումի քննարկումը համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը իրեն օտարելու մասին:
5. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020թվականի հունվարի 24-ի թիվ 5-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
6. Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 24
գ.Վերին Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 , Հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ N179

## ՄԱՆՎԵԼ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածով, համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 31-Ա որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Մանվել Մովսիսյանի դիմումը, միաժամանակ հաշվի առնելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը՝ որոշում եմ.

Համայնքի 2020 թվականի բյուջեի այլ նպաստներ ծախսերի 10 խմբի 7-1 ենթախմբի 4729 հոդվածից Վերին Պտղնի համայնքի բնակիչ Մանվել Մովսիսյանին տալ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020 թ.սեպտեմբերի 25
գ.Վերին Պտղնի